

Արձանագրություն N 6

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊԶ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«11» «Դեկտեմբերի» 2025թ.
Ժամը 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Հանձնաժողովի անդամներ

Ա. Բաբայան
Վ. Վահանյան, Ա. Գևորգյան, Հ. Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար

Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 22.10.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի նոյեմբերի 6-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicalc@gmail.com	02604367
2	«ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ	info@amamed.am	01332401
3	«Դիավանտ» ՍՊԸ	lawyer@diavant.am	00255375
4	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	lawyer@c-e.am	01210095
5	«Իվաֆարմ» ՍՊԸ	lvapharm89@gmail.com	08625799
6	«Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ	Llc.primemedical@gmail.com	01334053
7	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	tenders@margpharma.com	00842845
8	«Մեդպրո» ՍՊԸ	info@medpro.am	02626144
9	«Սուրեն Հակոբյան Գուրգենի» ԱԶ	Surohakobyan1992@gmail.com	40201069

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

12.11.2025թ. գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ և արձանագրել, որ բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա են շտկման: Գնահատող հանձնաժողովը նիստի ընթացքում կազմել է առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների շտկման ծանուցումները, սակայն իրավաբանական վարչության աշխատակիցը հայտնել է, որ 12.11.2025թ. էլեկտրոնային դատավարության համակարգում հասանելի է «Էմհար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ խնդրանքով անվավեր ճանաչել «ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի երկու պահանջը: 13.11.2025թ. պաշտոնապես ստացվել է Դատարանից ներկայացված բողոքը վարույթ ընդունելու որոշումը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի 5-րդ կետի համաձայն վերը նշված որոշումը Դատարանը պետք է ուղարկի Ֆինանսների նախարարություն, որն էլ վարույթ ընդունելու որոշումը հրապարակում է www.procurement.am ինտերնետային կայքում՝ նշելով գնման ընթացակարգի կասեցման օրը: Գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում կասեցնել գնահատումը մինչև կասեցման օրը հրապարակվի: 21.11.2025թ. դրությամբ դեռ www.procurement.am ինտերնետային կայքում դեռ հրապարակված չէր վարույթ ընդունելու որոշումը և նշված չէր կասեցման օրը: Գնահատող հանձնաժողովը գլխավոր քարտուղարի անունից գրություն է ներկայացնում Ֆինանսների նախարարություն վերոգրյալ խնդիրների, ինչպես նաև մնացած չորս չափաբաժիններով գնահատման ընթացքի վերաբերյալ պարզաբանման նպատակով, քանի որ բողոքը ներկայացվել է միայն 5-րդ չափաբաժնի մասով:

26.11.2025թ. գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշում է հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 26.11.2025թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

«ԱՄԱ Մեդիլ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները մասնավորապես՝ անհրաժեշտ է ներկայացնել Ձեր կողմից ներբեռնված անգլերենով և ռուսերենով փաստաթղթերի կնիքով հաստատված հայերեն թարգմանությունները (կոնսորցիումի պայմանագիրը, լիազորագիրը, Հավելված 1.2՝ «ԷՅ ԲԻ ԷՄ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ փաստաթղթերի հայերեն թարգմանությունները): Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Մեդպրո» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 4-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող

փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժնի համար ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Իվաֆարմ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 5-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժնի համար ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

28.11.2025թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին մասնակիցների կողմից ներկայացված պահանջված շտկումները:

02.12.2025թ. www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվում է վերոգրյալ վարույթ ընդունելու որոշումը և գնման ընթացակարգի կասեցման օրը՝ 02.12.2025թ.: Այնուհետև 05.12.2025թ. ֆինանսների նախարարությունից ստացվում է գրություն, առ այն, որ 01.12.2025թ. դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի ստացել գրությամբ նշված երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, իսկ մնացած 1-ից 4-րդ չափաբաժինների գնահատումը շարունակելու մասով առաջարկել է նշված չափաբաժինների մասով գնահատումն իրականացնել թղթային եղանակով՝ տեղեկատվության փոխանակումը (ծանուցումներն) իրականացնելով մասնակիցների հայտում նշված էլեկտրոնային փոստերի հասցեների միջոցով, պահպանելով այդ գործողությունների համար «ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2025/73» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետները:

Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ բոլոր ծանուցված մասնակիցների կողմից ներկայացված շտկումները կատարված են և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները 1-ից մինչև 4-րդ չափաբաժինների մասով շտկում ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

07.11.2025թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան տրամադրվել են հետևյալ պարզաբանումները.

Հարցում 1-ին՝ ներկայացվել է 24.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Սույն թվականի Հոկտեմբերի 23-ին Առողջապահության նախարարի հետ հանդիպումից ելնելով խնդրում ենք 1. կատարել հրավերում փոփոխություն՝ տեխնիկական բնութագրերի չափորոշիչների թույլատրելի շեղում ոչ պակաս քան 15% , այս մասով ոչ մի տեղ նշված չէ: 2. տալ հստակ պարզաբանում 5-րդ չափաբաժնի վերաբերյալ – 2.1 <<Դետեկտորի պիքսելի տեսակը՝ քառակուսի>> - ի՞նչից ելնելով կամ/և ի՞նչ հետազոտությունից ելնելով է ընտրվել տվյալ չափորոշիչը, երբ օրինակ կան նաև վեցանկյուն պիքսելներ: 2.2 <<Ֆոկուսային հեռավորությունը ոչ պակաս քան 650 մմ և ոչ ավելի քան 700մմ>> - ի՞նչից ելնելով կամ/և ի՞նչ հետազոտությունից ելնելով է ընտրվել տվյալ չափորոշիչը 2.3 << Ֆիքսված պաշտպանիչ դիմակ պացիենտի համար, որը չի պտտվում աղեղի հետ>> - - ի՞նչից ելնելով կամ/և ի՞նչ հետազոտությունից ելնելով է ընտրվել տվյալ չափորոշիչը 2.4 <<Կոմբինացված 2D և տոմոսինթեզի ռեժիմ մեկ կոմպրեսիայի ժամանակ (սինթետիկ 2D), FDA հավաստագրված>> - ի՞նչից ելնելով է առանձնահատուկ հենց այս տողում նշված FDA հավաստագրված լինելը,այլ ոչ համարժեք կամ ընդհանուր սարքի հետ 2.5 <<Ինտեգրված կապար-ակրիլային պաշտպանիչ վահան՝ չափսերը ոչ պակաս քան 185 x 70 սմ ,Կապարի համարժեքությունը՝ ոչ պակաս քան 0,5 մմ>> - մամոգրաֆիկ հետազոտությունների համար համաշխարհային ստանդարտիզացված պահանջն է՝ կապարի համարժեքությունը ոչ պակաս քան 0,3մմ, անտեսելով այդ փաստը նշվել է 0,5մմ: Ի՞նչից ելնելով է ընտրվել ոչ պակաս քան 0,5մմ:»

Պարզաբանում 1՝ տրամադրվել է 27.10.2025թ.

«Հարգելի գործընկեր 1. «տեխնիկական բնութագրերի չափորոշիչների թույլատրելի շեղում ոչ պակաս քան 15%» արտահայտությունը անընդունելի է քանի որ դա կնշանակի որ մասնակիցները կարող են առաջարկել 15%-ից ավել տեխնիկական բնութագրի չափորոշիչներից տարբերվող ապրանքատեսակ ինչի արդյունքում հնարավոր չի լինի բավարարել այն կարիքը որի համար կատարվում է տվյալ գնումը: Տեղեկացնում ենք, որ բոլոր այն դեպքերում երբ չափորոշիչներից որևէ մեկը ունի պահանջվածից շեղման հնարավորություն – դրա մասին նշվում է կոնկրետ այդ չափորոշիչի նկարագրությունում՝ «ոչ պակաս քան», «ոչ ավել քան», «թույլատրելի շեղումը **%», «+/-» և նմանատիպ այլ արտահայտությունների միջոցով: 2. Ձեր հարցման 2-րդ կետի 2,1-2,5 ենթակետերով բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիգի ձևավորման սկզբունքներին և

մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:»

Հարցում 2-րդ՝ ներկայացվել է 24.10.2025թ.

«Հարգելի գործընկերներ, Սույն թվականի հոկտեմբերի 22-ին էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգի միջոցով հայտարարվել է ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ: Այս աճուրդի 4-րդ չափաբաժնով նախատեսվում է ձեռք բերել 4 հատ վիրաբուժական ռենտգեն համակարգ: Այս չափաբաժնի տեխնիկական բնութագրում կա հետևյալ տողը. Թվային ռադիոգրաֆիա (մԱ). ոչ պակաս քան 20 մԱ-ից 24 մԱ միջակայքում Կարծում ենք, որ այս տողի ձևակերպման մեջ միգուցե տեխնիկական վրիպակ կա, քանի որ նշված չէ, թե միջակայքը ռադիոգրաֆիայի ռեժիմի որ ցուցանիշին է վերաբերում: Բացի այդ, միջակայքի վերին սահման նշելով կարծես սահմանափակում եք թվային ռադիոգրաֆիայի ռեժիմում հոսանքի ուժը ընդամենը 24մԱ-ով, սահմանափակելով, օրինակ 28 կամ 35, կամ ինչ որ արտադրողների մոտ նույնիսկ 100մԱ ցուցանիշ ունեցող սարքերով մասնակցության հնարավորությունը, այնինչ ինչքան բարձր լինի այս թիվը, այնքան հստակ կլինի ռադիոգրաֆիայի ռեժիմում ստացվող ստատիկ պատկերը: Կարծում ենք, որ այս տողի ձևակերպումը պիտի լիներ հետևյալ կերպ՝ Թվային ռադիոգրաֆիայի ռեժիմում հոսանքի ուժը ոչ պակաս, քան՝ 20մԱ: Խնդրում ենք դիտարկել այս նկատառումը և համաձայնության դեպքում կատարել համապատասխան փոփոխություն հրավերում:»

Պարզաբանում 2՝ տրամադրվել է 27.10.2025թ.

«Հարգելի գործընկեր 4-րդ չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրում «Թվային ռադիոգրաֆիա (մԱ). ոչ պակաս քան 20 մԱ-ից 24 մԱ միջակայքում» արտահայտությունը ներառված է «Ռադիոգրաֆիա» բաժնում, ուստի այն վերաբերվում է գրաֆիայի ռեժիմին: Նշված չափորոշիչը նշանակում է, որ առաջարկվող սարքավորումը պետք է ունենա ռադիոգրաֆիայի ռեժիմում հոսանքի ուժի կարգավորման հնարավորություն առնվազն 20մԱ-ից 24մԱ միջակայքում՝ հոսանքի ուժի նվազագույն ցուցանիշը պետք է լինի փոքր կամ հավասար 20մԱ-ին, իսկ առավելագույն ցուցանիշը մեծ կամ հավասար 24մԱ-ից: Տվյալ պահանջը չի սահմանափակում հոսանքի ուժի ավելի լայն (օրինակ՝ 15մԱ-ից 100մԱ, կամ 20մԱ-ից 35մԱ) միջակայք ունեցող սարքավորումների առաջարկով մասնակցության հնարավորությունը:»

Հարցում 3-րդ՝ ներկայացվել է 28.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Խնդրում ենք պարզաբանել 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի հետևյալ կետերը Դետեկտորի պիքսելի տեսակը՝ քառակուսի Այս ցուցանիշը սահմանափակում է նորագույն տեխնոլոգիաներով՝ մասնավորապես վեցանկյուն տեսակի պիքսելներով օժտված սարքավորումներով մասնակցությունը գնման գործընթացում: Բազմաթիվ հետազոտությունները

ապացուցում են, որ վեցանկյուն (հեքսագոնալ) պիքսելներով դետեկտորները գերազանցում են տրադիցիոն քառակուսի պիքսելներով դետեկտորներին մի շարք չափանիշներով. • Զգայունության բարելավում (DQE) • Պատկերի սրության բարձրացում (MTF) • Դոզայի նվազեցում • Արագ տվյալների ընթերցում Ստորև բերվում են մեջբերումներ մի քանի հետազոտություններից Համաձայն Mersereau R.M. (Stanford), հեքսագոնալ ցանցը ունի 13.4% բարձր նմուշառման արդյունավետություն, այսինքն՝ պիքսելային տարածքում կա ավելի փոքր «մեռած» հատված, և հետևաբար՝ ավելի շատ օգտակար սիգնալ է գրավվում նույն չափման դեպքում: Հղում՝ https://sep.stanford.edu/data/media/public/oldreports/sep38/38_18.pdf Y. Okada և համահեղինակներ (SPIE, 2013) հոդվածում՝ «Նոր մշակված բարձր զգայունությամբ և ցածր աղավաղմամբ a-Se մամոգրաֆիայի հարթ դետեկտոր», հեղինակները ներկայացրել են վեցանկյուն պիքսելներով դետեկտոր: Նրանք հաղորդում են. «Վեցանկյուն պիքսելների կիրառման արդյունքում դետեկտորի զգայունությունը բարձրացել է 18 %-ով՝ համեմատած ավանդական քառակուսի պիքսելներով դետեկտորի հետ»: Հեղինակները նաև նշում են, որ վեցանկյուն երկրաչափությունը a-Se շերտում ձևավորում է ավելի համաչափ էլեկտրական դաշտ, ինչը հանգեցնում է բարձր զգայունության: Հղում՝ https://www.spiedigitallibrary.org/conference-proceedings-of-spie/8668/86685V/A-newly-developed-a-Se-mammography-flat-panel-detector-with/10.1117/12.2006530.full?utm_source=chatgpt.com K.H. Ng-ի «Կլինիկական կիրառություններ. Թվային դետեկտորներ մամոգրաֆիայի համար» վերանայողական հոդվածում նկարագրվում է HEXAGONAL PIXEL/ HCP տեխնոլոգիան. «Վեցանկյուն պիքսելների դեպքում էլեկտրական դաշտը ավելի միասնական է, և դետեկտորի արդյունավետությունը առավելագույնի է հասնում»: (IUPESM) “HCP (Hexagonal Close Pattern)” տեխնոլոգիայի բաժնում նշվում են առավելությունները. • Զգայունության բարելավում (DQE) • Պատկերի սրության բարձրացում (MTF) • Դոզայի նվազեցում • Արագ տվյալների ընթերցում Հղում՝ https://iupesm.org/wp-content/uploads/2014/08/08Ng_DigitalDetector.pdf?utm_source=chatgpt.com Fujifilm ընկերության սպիտակ փաստաթղթում՝ «Technology Advances in Mammography: Dose Reduction and Image Quality», ասվում է, որ իրենց HCP (Hexagonal Close Pattern) դետեկտորի ձևավորումը «ապահովում է ավելի բարձր դետեկտորային զգայունություն՝ համեմատած քառակուսի պիքսելներ օգտագործող ավանդական դետեկտորների հետ»: (FUJIFILM Healthcare Americas Corporation) Օրինակային մեջբերում. «Այս մոտեցման կիրառմամբ հավաքման արդյունավետությունը մեծացվել է ... և դրա շնորհիվ մեզ հաջողվել է մոտ 20 %-ով նվազեցնել ճառագայթային դոզան՝ համեմատած քառակուսի պիքսելներով դետեկտորների հետ»: (FUJIFILM Healthcare Americas Corporation) Հղում՝ https://healthcaresolutions-us.fujifilm.com/wp-content/uploads/2023/02/FUJIFILM_Cristalle_White_Paper.pdf?utm_source=chatgpt.com UK NHS Practical Evaluation of AMULET Innovality հաստատում է, որ համակարգը ապահովում է միջին գեղձային դոզան (MGD)՝ զգալիորեն ցածր, քան ազգային ցուցանիշները, պահպանելով պատկերավորման բարձր որակը: Հղում՝ https://assets.publishing.service.gov.uk/media/60df16e58fa8f50abb32626f/Practical_evaluation_Fujifilm_Amulet_Innovality.pdf Այսպիսով, հաշվի առնելով, որ հեքսագոնալ պիքսելի կառուցվածքով դետեկտորները առնվազն չեն զիջում, իսկ մեծամասնություն պարամետրերով գերազանցում են քառակուսի

արխիտեկտուրայով դետեկտորներին, խնդրում ենք վերաձևակերպել պահանջը «Դետեկտորի պիքսելի տեսակը՝ քառակուսի կամ հեքսագոնալ կամ համարժեք»:

Պարզաբանում 3՝ տրամադրվել է 30.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 5-րդ չափաբաժնով ձեռքբերման առարկա հանդիսացող թվային մամուլագրաֆիկ սարքավորում արտադրող ընկերությունների գերակշռող մեծամասնության կողմից արտադրվող սարքավորումների դետեկտորների պիքսելները քառակուսի են՝ գտնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը չի հակասում գնումները կարգավորող օրենսդրական պահանջներին: Միաժամանակ՝ հաշվի առնելով այն փաստը, որ մասնագետների կողմից ձեր ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունն ու վերլուծությունը ժամանակատար է, սույն ընթացակարգի շրջանակներում վերոնշյալ պահանջի փոփոխությունը նպատակահարմար չի հանդիսանում: Հետագայում նմանատիպ սարքավորումների ձեռքբերման կարիքի դեպքում կդիտարկվի տեխնիկական բնութագրում համապատասխան փոփոխությունների նպատակահարմարությունը:»

Հարցում 4-րդ՝ ներկայացվել է 28.10.2025թ.

«Հարգելի հանձնաժողով, 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում սահմանված է սարքի որակի գնահատման հստակ սկզբունքը. Որակի վկայականներ (առկայություն) 1. ISO13485 կամ համարժեք 2. ISO 9001 կամ համարժեք 3. IIb կամ III ռիսկայնության դասի բժշկական սարքավորումների համար՝ 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ կամ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ կամ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ Այսպիսով, CE, MDR և FDA հավաստագրումները կարգավորվում են որպես համարժեք հիմքեր սարքի որակի և անվտանգության ամբողջական գնահատման համար: Սա հանդիսանում է բնութագրի գերակա պայման, և այն չի կարող սահմանափակվել ենթատողային պահանջներով: _____

Տեխնիկական հակասություն՝ որոշ ենթապարագրաֆներում («Տոմսինթեզ», «Սինթետիկ 2D», «Հանգույցների ավտոմատ համակարգչային հայտնաբերում») նշված է «միայն FDA» ձևակերպում՝ առանց «կամ CE/կամ MDR/կամ համարժեք» բառերի: Այս հիշատակումները հակասում են մրցույթի բնութագրում արդեն հաստատված CE = MDR = FDA հավաստագրության սկզբունքին, ստեղծում են շուկայական անհավասար պայմաններ և սահմանափակում են CE սերտիֆիկատով հավաստագրված սարքերով մասնակցությունը: Իրավական հղումներ • ՀՀ «Օրենքը գնումների մասին», Հոդված 3, մաս 2, կետ 1-3 Գնումները պետք է իրականացվեն մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով: • ՀՀ «Օրենքը գնումների մասին», Հոդված 13, մաս 5 Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: _____ Եզրակացություն. «FDA» հիշատակումները ենթատողերում առանց «կամ CE / կամ MDR / կամ համարժեք» արտահայտության

հակասում են նույն բնութագրի «որակի վկայականներ» բաժնի պահանջներին, իրավական ուժ չունեն, քանի որ հակասում են նաև օրենքի Հոդված 13(5)-ին և վնասում են մրցակցությանը, հակառակ Հոդված 3(2)-ին: _____ Պաշտոնական հստակեցման (ոչ փոփոխության) առաջարկ Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում ենք հանձնաժողովի կողմից գրավոր հաստատում, որ՝ Տեխնիկական բնութագրում «FDA» հիշատակումները մեկնաբանվում են որպես «FDA կամ CE կամ MDR կամ համարժեք», համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի Հոդված 13(5)-ի: Սույն առաջարկը չի ենթադրում տեխնիկական բնութագրի փոփոխություն, այլ հանդիսանում է գործող իրավական հիմքի պարտադիր կիրառության հստակեցում:»

Պարզաբանում 4՝ տրամադրվել է 30.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Գնման ենթակա սարքավորման համար հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված պահանջներից ոչ մեկը չի հանդիսանում գերակա պայման բնութագրի մեկ այլ չափորոշիչի նկատմամբ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջված ծրագրերից մի մասի համար FDA հավաստագրման պահանջը չի հանդիսանում հղում որևէ կոնկրետ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին՝ հետևաբար այդ պահանջը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Տեղեկացնում ենք, որ սահմանված պահանջին բավարարում են մի քանի՝ տարբեր արտադրողների կողմից, տարբեր երկրներում արտադրված տարբեր մոդելների մամոգրաֆիկ սարքավորումներ:»

Հարցում 5-րդ՝ ներկայացվել է 28.10.2025թ.

«Հարգելի գործընկեր: Ապրանքների համար նշված է մատակարարման ժամկետ պայմանագիրը կնքելուց 60 օրվա ընթացքում: Հաշվի առնելով որ բյուջետային տարին ընթացիկ տարվա մինչև դեկտեմբերի 25 է և ՀՀ կենտրոնական գանձապետարանը փակվում է դեկտեմբերի 25-ից հետո, արդյոք 1) հնարավոր է ապրանքները մատակարարել 2026 թվականի ընթացքում պահպանելով պայմանագրի կնքման պայմանագիրը կնքելուց 60 օրացուցային օրը : 2) արդյոք կնախատեսվի ֆինանսական միջոցներ 26 թվականին:»

Պարզաբանում 5՝ տրամադրվել է 30.10.2025թ.

«Հարգելի գործընկեր: Ապրանքների համար մատակարարման ժամկետ նշված է ոչ թե «Պայմանագիրը կնքելուց 60 օրվա ընթացքում» այլ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացուցային օրերի ընթացքում»: ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73 ծածկագրով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով այն է, մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, մատակարարման ժամկետի 60 օրացուցային օրվա հաշվարկը սկսելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու համար համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից: 1. Եթե պայմանագիրը ուժի մեջ մտնի 2025թ-ին,

սակայն մատակարարումը՝ 2026թ.-ին, հետևաբար ապրանքները կմատակարարվեն 2026թ.-ին, կամ եթե պայմանագիրը ուժի մեջ մտնի 2026 թ.-ին մատակարարումները կարվի 2026թ.-ին: 2. Եթե պայմանագրի կնքման օրվանից հաշված 6 ամսվա ընթացքում կնքվի համաձայնագիր, նշանակում է դրա հիմքն է ֆինանսական միջոցների հատկացումը: Պետք է հաշվի առնել, որ հրավերով սահմանված է կանխավճար 2025թ.-ին:»

Հարցում 6-րդ՝ ներկայացվել է 28.10.2025թ.

«Բարև Ձեզ հարգելի գործընկերներ, համայն սույն հրավերի 5-րդ չափաբաժնի տեխնիկական պահանջների սարք պետք է բավարարի IIb կամ III դիսկայնության դասի բժշկական սարքավորումների համար՝ 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ ԿԱՄ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ ԿԱՄ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ, սակայն նույն չափաբաժնի այլ տողովով պահանջվում է միայն FDA հավաստագրված Տոմոսինթեզի առկայություն և միայն FDA հավաստագրված Կոմբինացված 2D և տոմոսինթեզի ռեժիմ մեկ կոմպրեսիայի ժամանակ (սինթետիկ 2D): Կարծում ենք, որ այս պահանջների մեջ առկա է հակասություն, եթե ամբողջ սարքի համար ընդունելի է կամ CE հավաստագիր կամ FDA հավաստագիր ապա մյուս կետերի պարագայում նույնպես պետք է գործի այդ սկզբունքը : Հակառակ դեպքում խիստ սահմանափակում է մտցվում նույնիս եվրոպական շատ հայտնի բրենդերի մասնակցությանը:»

Պարզաբանում 6՝ տրամադրվել է 30.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում նկարագրված են այն պահանջները որոնց պետք է համապատասխանի առաջարկվող սարքավորումը, իսկ որակի վկայականներ բաժնում ներկայացված են այն սերտիֆիկատները (և դրանց հնարավոր համարժեքները) որոնք պետք է ներկայացվեն մատակարարող սարքավորման հետ ապրանքի մատակարարման փուլում: Տեխնիկական նկարագրության մեջ որոշ չափորոշիչների համար սահմանված FDA հավաստագրված լինելու պահանջը չի հակասում սարքավորման հետ մատակարարման ժամանակ ներկայացվելիք որակի վկայականներին: Տեղեկացնում ենք, որ սահմանված պահանջին բավարարում են մի քանի՝ տարբեր արտադրողների կողմից (ներառյալ եվրոպական), տարբեր երկրներում արտադրված տարբեր մոդելների մամոգրաֆիկ սարքավորումներ:»

Հարցում 7-րդ՝ ներկայացվել է 29.10.2025թ.

«Հարգելի հանձնաժողով, 1ին և 2րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է հետևյալ պահանջը. «Ոչ պակաս քան 4K վիդեո մշակման միավոր՝ 3 չիպային տեխնոլոգիայով»: Կարծում ենք, որ այս պահանջը սահմանափակում է ժամանակակից լուծումներով էնդոսկոպիկ համակարգերով մասնակցությունը, քանի որ ներկայումս առաջատար արտադրողների մեծ մասը (օր.՝ Olympus, Karl Storz, Mindray) կիրառում են մեկ չիպով բարձր լուծաչափի CMOS սենսորներ, որոնք ապահովում են ավելի բարձր որակի պատկեր՝ համեմատած ավելի հին երեք չիպային համակարգերի հետ: Ըստ տարբեր գիտական հրապարակումների՝ • Sony Corporation-ի տեխնիկական բացատրությունում նշվում է. «Single-chip մոդելները կարող են ապահովել զգալիություն, որը համարժեք է 3-chip մոդելներին»: • Ըստ գիտական ուսումնասիրության (Ahmad et al., "Characterization

of colour cross-talk ...", Cornell University, 2018, arXiv:1810.03697), մեկ չիպով համակարգերը կարող են ունենալ որոշ գունային խաչաձև ազդանշաններ, սակայն դրանք նախագծային հարցեր են և չեն ազդում համակարգի ընդհանուր որակի վրա: • Ժամանակակից բժշկական էնդոսկոպիկ համակարգերում մեկ չիպով (հատկապես CMOS) լուծումները թույլ են տալիս ապահովել բարձր SNR, լայն դինամիկ տիրույթ, նվազ ծայնային աղմուկ և ավելի թեթև տեսախցիկի գլուխ՝ ինչը կարևոր է վիրաբույժի էրգոնոմիկայի և ստերիլացման տեսանկյունից: Ուստի խնդրում ենք պարզաբանել՝ արդյոք 3 չիպային տեխնոլոգիայի պահանջը պարտադիր է, թե կարելի է դիտարկել նաև ժամանակակից Single CMOS 4K համակարգերի գերազանցող տարբերակներ: Այս մոտեցումը թույլ կտա ապահովել հավասար մրցակցություն և տեխնոլոգիական արդիականություն՝ չսահմանափակելով նորագույն սերնդի սարքերի մասնակցությունը:»

Պարզաբանում 7՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր իմ և 2րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված «Ոչ պակաս քան 4K վիդեո մշակման միավոր՝ 3 չիպային տեխնոլոգիայով» պահանջը չի սահմանափակում առաջատար արտադրողների մեծ մասի (ներառյալ Ձեր կողմից նշված՝ Olympus, Karl Storz, Mindray) կողմից արտադրված սարքավորումներով առաջարկների ներկայացումը, քանի որ դրանք ներկայումս արտադրում են 3 չիպային տեխնոլոգիայով 4K վիդեո մշակման միավորներով սարքավորումներ:»

Հարցում 8-րդ՝ ներկայացվել է 29.10.2025թ.

«Հարգելի մրցութային հանձնաժողով, Հարցումը վերաբերվում է սույն մրցույթի 3-րդ չափաբաժնին՝ "Բժշկական թվային ռադիոգրաֆիայի և ֆլյուորոսկոպիայի սարքավորում": Խնդրում ենք պարզաբանել մրցութային փաստաթղթերում նշված որոշ տեխնիկական պահանջներ՝ ստորև ներկայացված հիմնավորումներով. 1. SID (Source to Image Distance). Մրցույթի պահանջով SID-ը կազմում է 115–150 սմ: Ցանկանում ենք նշել, որ 150 սմ-ը բավարար չէ մեծահասակների կրծքավանդակի պատշաճ հետազոտության համար: Միևնույն ժամանակ պահանջվում է խողովակի պտույտը՝ ոչ պակաս քան 240°: Մեր առաջարկվող ռենտգեն համակարգը ապահովում է 100–180 սմ SID, ինչը լիովին բավարար է կրծքավանդակի որակյալ ախտորոշիչ պատկերավորում իրականացնելու համար: Հաշվի առնելով երկարացված SID հնարավորությունը՝ խողովակի պտույտի անհրաժեշտություն չի առաջանում: Վերոնշյալից ելնելով՝ մեր համակարգը խողովակի պտույտ չի ներառում, սակայն ներառում է թեքման պրոեկցիայի (Oblique projection) ֆունկցիան: 2. Սեղանի տրանսվերսալ շարժում. Մրցութային պահանջով սեղանի տրանսվերսալ շարժումը նախատեսված է 35 ± 5 սմ: Մեր առաջարկվող համակարգը ապահովում է 22 սմ շարժում, սակայն 100–180 սմ SID-ի շնորհիվ նման մեծ տրանսվերսալ տեղաշարժի կարիք չի առաջանում՝ միաժամանակ թույլ տալով պատշաճ կերպով դիրքավորել հիվանդին և ծածկել հետազոտվող տարածքը: Խնդրում ենք հաստատել, որ մեր կողմից առաջարկվող տվյալ տեխնիկական բնութագրերը ընդունելի են, քանի որ լիովին ապահովում են պատկերավորման կլինիկական պահանջները՝ պահպանելով անվտանգության, արդյունավետության և պատկերների բարձր որակի ցուցանիշները: Նախապես շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար:»

Պարզաբանում 8՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգ»-ի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը: Միաժամանակ տեղեկացնում ենք որ հրավերով հաստատված տեխնիկական բնութագրով SID-ի համար պահաջը ձևակերպված է ոչ թե «115-150սմ» այլ՝ «Ճառագայթիչից սեղան հեռավորությունը կարգավորվող՝ SID ոչ պակաս քան 115-150 սմ միջակայքում», ինչը չի սահմանափակում 100-180սմ SID ունեցող սարքավորումների առաջարկով մասնակցությունը:»

Հարցում 9-րդ՝ ներկայացվել է 29.10.2025թ.

«Հարգելի գործընկեր խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը. 1. Թիվ 1 չափաբաժնով պահանջվող լապարոսկոպի լրակազմի մեջ ներառված մի քանի ապրանքի համար պահանջել եք <<Ռրակի վկայականներ (առկայություն) 1. MDSAP 2. ISO13485 կամ համարժեք 3. 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ կամ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ կամ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ>>, մասնավորապես պահանջել եք Էնդոսկոպիկ տեսախցիկի թվային վիդեոբլոկի համար, Բարձր ինտենսիվության LED լույսի աղբյուրի համար, Ինսուֆլատորի համար, Լապարոսկոպիայի համար ներծծող և իրիգացիոն պոմպի համար, Արթրոսկոպիկ համակարգի համար, Գինեկոլոգիական վիրահատությունների համար հիստերոսկոպային պոմպի համար: Ձեր պահանջած MDSAP վկայականը Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի բժշկական նշանակության արտադրատեսակների շրջանառությունը կարգավորող թվով հինգ մարմինների կողմից սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում է տրվում: Այն մեծապես կրկնում է ISO13485 որակի կառավարման համակարգի կողմից ներկայացված պահանջները: Ինչ նպատակով եք մասնակիցներից պահանջում բացի ISO13485 և MDR Regulation (EU) 2017/745-ից, նաև MDSAP? 2. Ինչ կապ ունեն թվարկված հինգ երկրների կարգավորող մարմինների կողմից սահմանված պահանջները ՀՀ ներմուծվող և ՀՀ տարածքում կիրառվող բժշկական նշանակության արտադրատեսակների հետ? Ներմուծվող սարքի որակական կամ անվտանգային կոնկրետ ինչ առանձնահատկություն կա, որը ISO13485 և MDR Regulation (EU) 2017/745 վկայականներով չի լուծվում, սակայն MDSAP-ը <<փակում է>> այդ բացը? 3. Երբ նախորդ երկու հարցերին պատասխանելիս ենթադրաբար մեծաձավալ հիմնավորումներ ներկայացնեք MDSAP վկայականի ծայրահեղ անհրաժեշտության, դրա բացառիկ նշանակության ու կարևորության մասին, ապա խնդրում եմ պարզաբանել, թե ինչպես է ստացվում, որ այդ նույն չափաբաժնի նույն լապարոսկոպի լրակազմի մեջ մտնող որոշ սարքերի համար պարտադիր պահանջում եք MDSAP վկայական, իսկ մյուսների համար չեք պահանջում: Եթե այդքան կարևոր է MDSAP վկայականի առկայությունը և այն պարտադիր պետք է ներկայացվի, ապա ինչու MDSAP վկայական չեք պահանջել նույն չափաբաժնի նույն լապարոսկոպի լրակազմի մեջ գտնվող 4K տեսախցիկի գլխիկի համար, Օպտիկամանրաթելային լուսատարի համար, 4K բժշկական մոնիտորի համար, Լապարոսկոպի գործիքների հավաքածուի համար, Բարձր ճնշման կոմպրեսիոն համակարգի

(տուրնիկետ) համար, Գործիքակազմի համար, Հիստերոսկոպիայի գործիքների հավաքածուի համար, Ռեզեկցիոն էլեկտրոդների համար, ՏՈՒՌ գործիքակազմի համար, ՏՈՒՐ վիրահատությունների համար էլեկտրավիրաբուժական սարքի համար: Այսինքն Դուք ընտրողաբար նույն լրակազմի մեջ գտնվող մի քանի սարքերի համար պահանջել եք MDSAP վկայական, իսկ այդ նույն լրակազմի մեջ գտնվող մյուս սարքերի համար չեք պահանջել: Հարց է ծագում, թե ինչն էր խանգարում Ձեզ, որպեսզի Ձեր կարծիքով այդքան կարևոր MDSAP վկայականի պահանջ սահմանեիք նաև լրակազմի մեջ մտնող մյուս սարքերի համար: Պատասխանն ակնհայտ է, Դուք ուղղակի արտագրել եք Ձեր նախընտրելի արտադրողի ձեռնարկում նշված ցուցանիշները, ուղղակի Ձեր նախընտրելի արտադրողը լրակազմի մեջ գտնվող որոշ սարքերի համար ունեցել է MDSAP վկայական, իսկ մյուսների համար չի ունեցել MDSAP վկայական, այլապես Դուք բոլոր սարքերի համար կպահանջեիք MDSAP վկայական: Ձեր նախընտրելի արտադրողի ձեռնարկից հրավերի տեխնիկական բնութագրում արտագրել եք գրեթե բոլոր ցուցանիշները, միայն մոռացել եք վերջում գրել RZ Medizintechnik GmbH: 4. Ինչ նպատակով եք Բարձր ճնշման կոմպրեսիոն համակարգի համար (տուրնիկետ) նաև պահանջել ISO9001 վկայական? Այսինքն Ձեր համար բավարար չէ, որ բժշկական սարքի արտադրողն ունենա ISO13485 վկայական, այլ պետք է նաև ունենա ISO9001 վկայական: Եթե այդքան կարևոր է այդ վկայականը, ապա ինչու լրակազմի մեջ մտնող մյուս սարքերի համար չեք պահանջել? Չնայած վերևում արդեն գրված է պատճառը, հավանաբար Ձեր նախընտրելի RZ Medizintechnik GmbH-ը ոչ բոլոր սարքերի համար ունի ISO9001 վկայական: 5. Ինչ նպատակով եք պահանջում, որ ԹՎԱյին տեսախցիկի համակարգը, տեսախցիկի գլխիկը, բարձր ինտենսիվության LED լույսի աղբյուրը, ինսուֆլատորը և Լապարոսկոպիայի համար ներծծող և իրիգացիոն պոմպը լինեն նույն արտադրողից? Եթե հաջորդ տողով արդեն խելամիտ պահանջ եք սահմանել, որ <<Բոլոր սարքավորումներն ու գործիքակազմը պետք է համատեղելի լինեն միմյանց հետ>>, ապա որն է նշված սարքերը նույն արտադրողից լինելու պահանջի նպատակը? Հավանաբար Ձեր նախընտրելի վերոնշյալ արտադրողը դրանք է արտադրում, իսկ եթե հանկարծ այդ արտադրողը արտադրեր լրակազմում ներառված բոլոր սարքերը, կասկած չունենք, որ պահանջելու էիք, որ բոլոր սարքերն արտադրված լինեն մեկ արտադրողից:»

Պարզաբանում 9՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիգի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացույցային օրվա ընթացքում:» Ձեր այն պնդումը որ տեխնիկական բնութագրում ներառված պահանջները արտագրված են RZ Medizintechnik GmbH ընկերության ձեռնարկից անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը: Տեղեկացնում ենք Ձեզ, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին

համապատասխանում են առնվազն հինգ տարբեր ընկերությունների կողմից արտադրվող տարբեր մոդելների սարքավորումներ:»

Հարցում 10-րդ՝ ներկայացվել է 29.10.2025թ.

«Հարգելի գործընկեր խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը. 1. Թիվ 2 չափաբաժնով պահանջվող լապարոսկոպի լրակազմի մեջ ներառված մի քանի ապրանքի համար պահանջել եք <<Որակի վկայականներ (առկայություն) 1. MDSAP 2. ISO13485 կամ համարժեք 3. 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ կամ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ կամ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ>>, մասնավորապես պահանջել եք էնդոսկոպիկ տեսախցիկի թվային վիդեոբլոկի համար, Բարձր ինտենսիվության LED լույսի աղբյուրի համար, Ինսուֆլատորի համար, Լապարոսկոպիայի համար ներծծող և իրիգացիոն պոմպի համար: Ձեր պահանջած MDSAP վկայականը Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի բժշկական նշանակության արտադրատեսակների շրջանառությունը կարգավորող թվով հինգ մարմինների կողմից սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում է տրվում: Այն մեծապես կրկնում է ISO13485 որակի կառավարման համակարգի կողմից ներկայացված պահանջները: Ինչ նպատակով եք մասնակիցներից պահանջում բացի ISO13485 և MDR Regulation (EU) 2017/745-ից, նաև MDSAP? 2. Ինչ կապ ունեն թվարկված հինգ երկրների կարգավորող մարմինների կողմից սահմանված պահանջները ՀՀ ներմուծվող և ՀՀ տարածքում կիրառվող բժշկական նշանակության արտադրատեսակների հետ? Ներմուծվող սարքի որակական կամ անվտանգային կոնկրետ ինչ առանձնահատկություն կա, որը ISO13485 և MDR Regulation (EU) 2017/745 վկայականներով չի լուծվում, սակայն MDSAP-ը <<փակում է>> այդ բացը? 3. Երբ նախորդ երկու հարցերին պատասխանելիս ենթադրաբար մեծածավալ հիմնավորումներ ներկայացնեք MDSAP վկայականի ծայրահեղ անհրաժեշտության, դրա բացառիկ նշանակության ու կարևորության մասին, ապա խնդրում եմ պարզաբանել, թե ինչպես է ստացվում, որ այդ նույն չափաբաժնի նույն լապարոսկոպի լրակազմի մեջ մտնող որոշ սարքերի համար պարտադիր պահանջում եք MDSAP վկայական, իսկ մյուսների համար չեք պահանջում: Եթե այդքան կարևոր է MDSAP վկայականի առկայությունը և այն պարտադիր պետք է ներկայացվի, ապա ինչու MDSAP վկայական չեք պահանջել նույն չափաբաժնի նույն լապարոսկոպի լրակազմի մեջ գտնվող 4K տեսախցիկի գլխիկի համար, Օպտիկամանրաթելային լուսատարի համար, 4K բժշկական մոնիտորի համար, Լապարոսկոպի գործիքների հավաքածուի համար: Այսինքն Դուք ընտրողաբար նույն լրակազմի մեջ գտնվող մի քանի սարքերի համար պահանջել եք MDSAP վկայական, իսկ այդ նույն լրակազմի մեջ գտնվող մյուս սարքերի համար չեք պահանջել: Հարց է ծագում, թե ինչն էր խանգարում Ձեզ, որպեսզի Ձեր կարծիքով այդքան կարևոր MDSAP վկայականի պահանջ սահմանեիք նաև լրակազմի մեջ մտնող մյուս սարքերի համար: Պատասխանն ակնհայտ է, Դուք ուղղակի արտագրել եք Ձեր նախընտրելի արտադրողի ձեռնարկում նշված ցուցանիշները, ուղղակի Ձեր նախընտրելի արտադրողը լրակազմի մեջ գտնվող որոշ սարքերի համար ունեցել է MDSAP վկայական, իսկ մյուսների համար չի ունեցել MDSAP վկայական, այլապես Դուք բոլոր սարքերի համար կպահանջեիք MDSAP վկայական: Ձեր նախընտրելի արտադրողի ձեռնարկից հրավերի տեխնիկական բնութագրում արտագրել եք գրեթե բոլոր

ցուցանիշները, միայն մոռացել եք վերջում գրել RZ Medizintechnik GmbH: 4. Ինչ նպատակով եք պահանջում, որ Թվային տեսախցիկի համակարգը, տեսախցիկի գլխիկը, բարձր ինտենսիվության LED լույսի աղբյուրը, ինսուֆյատորը և Լապարոսկոպիայի համար ներծծող և իրիգացիոն պոմպը լինեն նույն արտադրողից? Եթե հաջորդ տողով արդեն խելամիտ պահանջ եք սահմանել, որ <<Բոլոր սարքավորումներն ու գործիքակազմը պետք է համատեղելի լինեն միմյանց հետ>>, ապա որն է նշված սարքերը նույն արտադրողից լինելու պահանջի նպատակը? Հավանաբար Ձեր նախընտրելի վերոնշյալ արտադրողը դրանք է արտադրում, իսկ եթե հանկարծ այդ արտադրողը արտադրեր լրակազմում ներառված բոլոր սարքերը, կասկած չունենք, որ պահանջելու էիք, որ բոլոր սարքերն արտադրված լինեն մեկ արտադրողից:»

Պարզաբանում 10՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիգի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:» Ձեր այն պնդումը որ տեխնիկական բնութագրում ներառված պահանջները արտագրված են RZ Medizintechnik GmbH ընկերության ձեռնարկից անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը: Տեղեկացնում ենք Ձեզ, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում են առնվազն հինգ տարբեր ընկերությունների կողմից արտադրվող տարբեր մոդելների սարքավորումներ:»

Հարցում 13-րդ՝ ներկայացվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Սույն թվականի հոկտեմբերի 29-ին Ձեզ են ուղարկվել պարզաբանման հարցումներ, որոնց առ այսօր չեք պատասխանել, ընդ որում, նույն մասաթվին այլ մասնակիցների կողմից կատարված հարցումներին պատասխանել եք: Խնդրում ենք պարզաբանել, թե ինչու չեք պատասխանում մեր կողմից կատարված հարցումներին: Սահմանված ժամկետում մեր հարցումներին չպատասխանելու դեպքում, մրցույթը կբողոքարկվի նաև այդ հիմքով:»

Պարզաբանում 13՝ տրամադրվել է 03.11.2025թ.

«Հարգելի գործընկեր: Ձեր կողմից նշված հարցումներին տրամադրված պարզաբանումների մասին հայտնում եմ հետևյալը՝ թվով 9-րդ հարցմանը, որը ներկայացվել է էլեկտրոնային աճուրդի համակարգով 29.10.2025թ. ժամը 23:40-ին, աշխատանքային ժամի ավարտից հետո, իսկ պարզաբանումը տրամադրվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան 31.10.2025թ. ժամը 16:15-ին: Թվով 10-րդ հարցմանը, որը նույնպես ներկայացվել է աշխատանքային ժամի ավարտից հետո՝ 29.10.2025թ. ժամը 23:58-ին, սակայն պարզաբանումը

տրամադրվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան 31.10.2025թ. ժամը 16:18-ին:»

Հարցում 14-րդ՝ ներկայացվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր 1. Խնդրում եմ պարզաբանել թիվ 1 և 2 չափաբաժնով պահանջվող լապարոսկոպի համար լրացուցիչ MDSAP սերտիֆիկատ պահանջելու անհրաժեշտությունը այն պարագայում, երբ արդեն պահանջել եք ISO13485 կամ համարժեք, 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ կամ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ կամ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ: 2. Փաստացի MDSAP վկայականը վերաբերում է Բրազիլիայի, Ճապոնիայի, Կանադայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ավստրալիայի տարածքում բժշկական սարքերի շրջանառությանը: Խնդրում եմ պարզաբանել, թե ինչով է պայմանավորված կոնկրետ MDSAP սերտիֆիկատ պահանջելու անհրաժեշտությունը, այսինքն կարծում եք, որ հայտը նախագծող ներկայացուցիչը կամ սարքը շահագործողը կարողանալու է հիմնավորել, որ իր կարիքը կարող է բավարարվել միայն լրացուցիչ MDSAP սերտիֆիկատ պահանջելով? Տեխնիկական բնութագիրը պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված, դա նշանակում է, որ գրված յուրաքանչյուր պահանջ ծառայում է կոնկրետ նպատակի, օրինակ մոնիտորի համար 4K պահանջի նպատակը որակյալ պատկեր ստանալն է, պաշտպանության դասը ոչ պակաս քան IP X8-ի պահանջի նպատակը ջրից պաշտպանության բարձր դաս ունեցող սարք ունենալն է, սակայն անհայտ է, թե ինչու է պահանջվել MDSAP սերտիֆիկատ, որն է դրա օբյեկտիվ հիմնավորումը, ինչ կոնկրետ կարիք է բավարարելու, որը չի բավարարվում հաջորդիվ պահանջված EC 93/42/EEC, EU MDR2017/745, FDA, ISO13485 սերտիֆիկատներով: 3. Բացի այդ, թերևս անհիմն է MDSAP սերտիֆիկատի պահանջը, սակայն խնդրում եմ պարզաբանել, թե ինչու նշված չէ Ձեր կարծիքով դրան համարժեք սերտիֆիկատի անվանումը, օրինակ ի տարբերություն հաջորդիվ պահանջված EC 93/42/EEC-ի նշել եք համարժեք սերտիֆիկատի անվանումը EU MDR 2017/745 կամ FDA: Ինչու «<կամ համարժեք>> բառը նշված չէ, չնայած չենք էլ պատկերացնում, թե որ սերտիֆիկատը կարող է դիտարկվել MDSAP-ին համարժեք: Եթե MDSAP-ին համարժեք սերտիֆիկատ գոյություն ունի, ապա խնդրում եմ պարզաբանել, որպեսզի պոտենցիալ մասնակցներն իմանան որ կա այլընտրանք, կա համարժեք: 4. Բացի այդ աչքի է զարնում նաև այն որ MDSAP սերտիֆիկատ պահանջել եք նշված չափաբաժինների կազմի մեջ գտնվող ոչ բոլոր գործիքների համար: Ինչով է պայմանավորված այս ընտրողական մոտեցումը:»

Պարզաբանում 14՝ տրամադրվել է 03.11.2025թ.

«Հարգելի գործընկեր Ձեր կողմից բարձրացված հարցերը մեծամասամբ վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիքի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: ...» Տեղեկացնում ենք, որ հրավերի տեխնիկական բնութագրով

պահանջված որակի սերտիֆիկատները (ներառյալ MDSAP) սերտիֆիկատը համապատասխան պահանջներին բավարարելու դեպքում տրամադրվում է ցանկացած երկրի, ցանկացած արտադրողի կողմից արտադրված ցանկացած մոդելին: Այդ սերտիֆիկատի պահանջը չի հանդիսանում հղում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, և հետևաբար «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը տվյալ դեպքին չի վերաբերվում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխանում են մի քանի տարբեր արտադրողների կողմից արտադրված սարքավորումների տարբեր մոդելներ, հետևաբար՝ գնումները կանոնակարգող որևէ օրենսդրական պահանջին հրապարակված տեխնիկական բնութագիրը չի հակասում :»

Հարցում 15-րդ՝ ներկայացվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/59» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում Ձեզ ենք ներկայացնում 4-րդ չափաբաժնի պարզաբանման հարցումը: Ռենտգենյան խողովակի տեխնիկական բնութագրում սահմանված է հետևյալ ցուցանիշը՝ «Անողային ջերմակրությունը՝ ոչ պակաս, քան 210 kHU»: Մեր կողմից առաջարկվող սարքավորումը իր տեխնիկական չափորոշիչներով զգալիորեն գերազանցում է պահանջվող բնութագրերին համապատասխան սարքավորումը: Սակայն ըստ արտադրողի պաշտոնական տեխնիկական փաստաթղթերի՝ խողովակի անողային ջերմակրությունը կազմում է 200 kHU, քանի որ արտադրողը կիրառում է մոնոբլոկ տեխնոլոգիա, որի շնորհիվ խողովակը տեղակայվում է մեկ միասնական մոդուլում: Այդ լուծման արդյունքում սարքի մոնոբլոկի ջերմային հզորությունը շատ ավելի բարձր է, քան պահանջվողը, մասնավորապես՝ • Հասանելի ջերմային հզորություն (ռենտգեն)՝ 1163 կՋ (1550 kHU), • Ընդհանուր ջերմային հզորություն՝ 1686 կՋ (2248 kHU): Հաշվի առնելով, որ գնահատումը կատարվում է փաստացի պահանջված տեխնիկական բնութագրերին համապատասխանության հիմքով, և վերոնշյալ հանգամանքները կարող են չներառվել գնահատման գործընթացում, խնդրում ենք ընդունելի համարել «Անողային ջերմակրությունը՝ ոչ պակաս, քան 200 kHU» ցուցանիշը, որպես թույլատրելի շեղում: Ուզում ենք ընդգծել, որ այս տարբերությունը չնչին է և չի կարող որևէ կերպ ազդել սարքի աշխատանքի արդյունավետության և որակի վրա:»

Պարզաբանում 15՝ տրամադրվել է 03.11.2025թ.

«Հարգելի գործընկեր Պարզաբանման հարցման մեջ նշված «ընդունելի համարել «Անողային ջերմակրությունը՝ ոչ պակաս, քան 200 kHU» ցուցանիշը, որպես թույլատրելի շեղում» խնդրանքի առնչությամբ տեղեկացնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 04.07.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ հոդվածի 22-րդ ենթակետի՝ «հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ 517,900,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով՝ 285,120,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Մեդպրո» ՍՊԸ-ն՝ 4-րդ չափաբաժնի մասով՝ 161,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Մերժել բոլոր այն մասնակիցների հայտերը որոնց ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գները՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.12.2025թ.-ից մինչև 21.12.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:


Հանձնաժողովի

Նախագահ՝

 Ա. Բաբայան

Անդամներ՝

 Վ. Վահանյան

 Ա. Գևորգյան

 Տ. Խուրշուդյան

Քարտուղար՝

 Տ. Մարգարյան

Մարզային ատոցալարական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՏԱՄԴԵ 2025/73 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հավաքարձ անցկուղի և 07.11.2025թ. հայացած հավաքարձ անցկուղից հետո

Զ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախատաշխյան		«Մարդ Ֆարմացիա» ՍՊԸ						«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ						Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Լապտոսկոպ որովայնային, ուրոլոգիական, գնեկուրոգիական և արթրոսկոպիկ միջանոտությունների համար	33161190/503	5	80,000,000.00	400,000,000.00	391,900,000.00	0.00	391,900,000.00	78,380,000.00	78,380,000.00	395,998,762.00	0.00	395,998,762.00	79,199,752.40	79,199,752.40	
2	Լապտոսկոպ՝ գրոնթեակազմով	33161190/504	3	50,000,000.00	150,000,000.00	126,000,000.00	0.00	126,000,000.00	42,000,000.00	42,000,000.00	151,000,000.00	0.00	151,000,000.00	50,333,333.33	50,333,333.33	
3	Բժշկական թվային ռադիոգրաֆիայի և ֆլուորոսկոպիայի սարքավորում	33111330/505	6	48,100,000.00	288,600,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00	
4	Վիրաբուժական ունեղեն համակարգ (C-Arm)	33111330/506	4	75,000,000.00	300,000,000.00			0.00	0.00	0.00	274,400,000.00	0.00	274,400,000.00	68,600,000.00	68,600,000.00	
5	Մամուլագրաֆ տոմոսինթեզով	33111250/503	2	140,000,000.00	280,000,000.00			0.00	0.00	0.00	151,000,000.00	0.00	151,000,000.00	75,500,000.00	75,500,000.00	

Մարզային ատոճապահական կազմակերպությունների հազեցման համար անհրաժեշտ թեշկական արդքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱԶԱՄԴԶ- 2025/73 ծաճկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակարարձ աճուրդը և 07.11.2025թ. կայացած հակարարձ աճուրդից հետո

Զ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		Սուրեն Հակոբյան Գուրգենի ԱԶ						«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Վերցնական առաջարկ						Վերցնական առաջարկ				
						Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Լապտոպով ողովաթային, ողորգիական, գեներովգիական և արդրումայիկ մեջանությունների համար	33161190/503	5	80,000,000.00	400,000,000.00	800,000,000.00	0.00	800,000,000.00	160,000,000.00	160,000,000.00			0.00	0.00	0.00	0.00
2	Լապտոպով՝ գործիքակազմով	33161190/504	3	50,000,000.00	150,000,000.00	700,000,000.00	0.00	700,000,000.00	233,333,333.33	233,333,333.33	133,000,000.00	0.00	133,000,000.00	44,333,333.33	44,333,333.33	
3	Բեշկական թեային ռադիոգրաֆիայի և ֆլուորոսկոպիայի սարքավորում	3311330/505	6	48,100,000.00	288,600,000.00	800,000,000.00	0.00	800,000,000.00	133,333,333.33	133,333,333.33			0.00	0.00	0.00	0.00
4	Վիրաբուժական ռենտգեն համակարգ (C-Arm)	3311330/506	4	75,000,000.00	300,000,000.00	800,000,000.00	0.00	800,000,000.00	200,000,000.00	200,000,000.00			0.00	0.00	0.00	0.00
5	ՄասնագրաՖ տոմսիթեզով	3311250/503	2	140,000,000.00	280,000,000.00	800,000,000.00	0.00	800,000,000.00	400,000,000.00	400,000,000.00			0.00	0.00	0.00	0.00

Մարզային ատոմջարտահական կազմակերպությունների հազվեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԼԱՄՈՂԶՔ 2025/73 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հավաքարձ աճուրդը և 07.11.2025թ. կայացած հավաքարձ աճուրդից հետո

				Նախահաշվային		«ԱՄՍ Մեդիքլ» ՍՊԸ								«Իվաֆարմ» ՍՊԸ 5-րդ չ/բ կատեգորիա						
						Վերջնական առաջարկ								Վերջնական առաջարկ						
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով					
2/Հ	Սարքավորման անվանումը			CPV կոդը	Քանակ															
1	Լապարոսկոպ ոտկայանի, ուրոլոգիական, գինեկոլոգիական և արթրոսկոպիկ միջանորմությունների համար			33161190/503	5	80,000,000.00	400,000,000.00			0.00	0.00			0.00	0.00	0.00				
2	Լապարոսկոպ՝ գործընթացով			33161190/504	3	50,000,000.00	150,000,000.00			0.00	0.00			0.00	0.00	0.00				
3	Բժշկական թևային ռադիոգրաֆիայի և ֆլուորոսկոպիայի սարքավորում			33111330/505	6	48,100,000.00	288,600,000.00	285,120,000.00	0.00	285,120,000.00	47,520,000.00	47,520,000.00	288,599,978.00	0.00	288,599,978.00	48,099,996.33				
4	Վիրաբուժական ռեետզեն համակարգ (C Arm)			33111330/506	4	75,000,000.00	300,000,000.00	210,000,000.00	0.00	210,000,000.00	52,500,000.00	52,500,000.00	192,800,000.00	0.00	192,800,000.00	48,200,000.00				
5	Մանեոգրաֆ տոմոսինթեզով			33111250/503	2	140,000,000.00	280,000,000.00			0.00	0.00			0.00	146,000,000.00	73,000,000.00				

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԼ ԷԱՏԱՄԴԲ- 2025/73 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ անուրդը և 07.11.2025թ. հայացած հակադարձ անուրդից հետո

				«Մեղաբու» ՍՊԸ						«Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ						
Նախահաշվային				Վերջնական առաջարկ						Վերջնական առաջարկ						
				Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով			
2/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ											
1	Լապարոսկոպ դրովայնային, ուղղորդական, գինեկոդիֆիկաց և արթրոսկոպիկ միջանոսությունների համար	33161190/503	5	80,000,000.00	400,000,000.00			0.00	0.00					0.00	0.00	0.00
2	Լապարոսկոպ՝ գրոմիցակազմով	33161190/504	3	50,000,000.00	150,000,000.00			0.00	0.00					0.00	0.00	0.00
3	Բժշկական թվային ռադիոգրաֆիայի և ֆլյուորոսկոպիայի սարքավորում	33111330/505	6	48,100,000.00	288,600,000.00			0.00	0.00					0.00	0.00	0.00
4	Վիրաբուժական ռենտգեն համակարգ (C Arm)	33111330/506	4	75,000,000.00	300,000,000.00	161,000,000.00	0.00	161,000,000.00	40,250,000.00	40,250,000.00	168,000,000.00	0.00	168,000,000.00	42,000,000.00	42,000,000.00	42,000,000.00
5	Մասնագրաֆ տոմոսինթեզով	33111250/503	2	140,000,000.00	280,000,000.00			0.00	0.00					0.00	0.00	0.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հաճեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ՄԻ ԷԼՃԱՄԴԲ 2025/73 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 07.11.2025թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

«Դիավանտ» ՍՊԸ										
Նախահաշվային				վերջնական առաջարկ						
				Սիմվոլ	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով		
Ծ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ					
1	Լապարոսկոպ դոլափային, ուրոլոգիական, գինեկուրցիական և արթրոսկոպիկ միջամտությունների համար	33161190/503	5	80,000,000.00	400,000,000.00			0.00	0.00	0.00
2	Լապրոսկոպ՝ գործընթացով	33161190/504	3	50,000,000.00	150,000,000.00			0.00	0.00	0.00
3	Բժշկական թվային ռադիոգրաֆիայի և ֆլյուորոսկոպիայի սարքավորում	33111330/505	6	48,100,000.00	288,600,000.00			0.00	0.00	0.00
4	Վիրաբուժական ռենտգեն համակարգ (C-Arm)	33111330/506	4	75,000,000.00	300,000,000.00			0.00	0.00	0.00
5	Մանուգրաֆ տոմոսինթեզով	33111250/503	2	140,000,000.00	280,000,000.00	260,000,000.00	0.00	260,000,000.00	130,000,000.00	130,000,000.00